Թեսաղոնիկու։ Այլ և գայր յերկնից կորեկ թզաչափ ի Տրամատայ յերկիրս Ցունաց որ ասի Ռումէլի։ Այլ և ի Մանկալայ ցորեան և յայլ տեղի՝ գարի. զկորեկն և զցորեան առեալ ոմանց ճանապարհորդաց՝ բերեալ աստ, զոր տեսաք աչօք մերովք. և յորժամ աղաչին, ասէ, ալիւր լինէր ի համ լեզուոյ և ոչ լինէր հաց։

Վարդավառի յաւուրն երեկոյի որ ԻԸ Ցուլիսի, ապա տեսաք անձրև ի քաղաքս և ոչ ի շահս, նոյնպէս և յամենայն տեղիս։

Իսկ ի մտանելն Օգոստոսի Դշի աւուր ելին ուխտաւորք ի քաղաքէս գնալ ի Սուրբ Երուսաղէմ ընդ եղիազար վարդապետի նաւով, և Մարտիրոս վարդապետն ևս լուեալ զգնալ մեծին Աստուածատրոյ վարժապետին իւրոյ, ել ընդ նմա՝ զի ի Թէքիրտաղ գտեալ աւրհնեսցի ի նմանէ։ Եւ յորժամ ելաք ի Պոլսոյն Կոստանդնիայ, էր քամին նստոսի ընդդէմ մեր, վասն որոյ դէմ եղեալ ի կղզիսն, որ է մղոնս Ի՝ հանդէպ քաղաքին, և ելաք ի Հէպիկէլի կոչեցեալն, ուր տեսեալ Ցոյնք պատուասիրեցին զմեզ ոչ սակաւ՝ տանել ի վանս և յեկեղեցիս իւրեանց, զի և ի սկզբանէ ծանօթք մեր էին։ Եւ կացեալ զգիշերն ի բուն անդէն, առաւօտեան պահու հանդարտ հողմով երերեալ ծփայաք ի մէջ ծովուն և ի ջերմութենէ արփւոյն խորշակահար տօթոյն չունչք մեր նուաղէին և նեղէին ի ծարաւոյ, և էին անկեալք իբր զկոճղ մի ի գետնի և ընաւին ի կղզեացն յառաջ քան զմղոնս Բ ոչ կարէաք երթալ, և կայաք զաւուրս Բ հանդէպ քաղաքին։ Եւ ողորմեալ ի խիղճ ստընդիացոց և մանկանց՝ Բ–րդ ժամու հնչեալ հողմն վօռէք այնքան, մինչ զի հակէր զմի կողմ նաւին, և ընդ այն ուռուցեալ առագաստին՝ իբր զթևաւոր ընթանայր և հովանի լինէր նստելոցն, և ի քաղցրաշունչ օդոյն զովացեալ լինէին